ՀԱՅԿ ԵՎ ԲԵԼ

(ըստ Մովսես Խորենացու)

Ա

Հայկը վայելչակազմ էր, թիկնավետ, գեղագանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Նա քաջ և երևելի էր հսկաների մեջ: Հայկը խրոխտանալով ապստամբեց Բելի բռնատիրության դեմ այն ժամանակ, երբ մարդկային ցեղը տարածվում էր ամբողջ երկրի վրա՝ բազմամբոխ հսկաների և ուժեղների մեջ. այդ ժամանակ մարդիկ ձգտում էին մեկը մյուսին իշխել:

Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և ամբողջ երկիրը գրավել: Հայկը չկամեցավ հնազանդվել նրան: Բաբելոնում իր Արամանյակ որդուն ունենալուց հետո գնաց դեպի Արարադի երկիրը, որ գտնվում էր հյուսիսային կողմերում: Նա իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, զորավոր մարդկանցով՝ թվով մոտ երեք հարյուր հոգի, և ուրիշ ընդոծիններով գնում բնակվում է մի լեռան ստորոտում՝ դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ: Հայկը, նրանց իրեն հնազանդեցնելով, այնտեղ բնակելի տուն է շինում և որպես ժառանգություն տալիս է Կադմոսին՝ Արամանյակի որդուն:

Իսկ ինքն իր մնացած մարդկանցով և ընտանիքի մյուս անդամներով շարժվում է դեպի հյուսիս-արևմուտք, գալիս բնակվում մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք: Այստեղ բնակվողները Թորգոմյան տան սերնդի հայրեր են: Հայկն այդտեղ շինում է մի գյուղ, որն իր անունով կոչում է Հայկաշեն: Պատմության մեջ հիշվում է, թե այս դաշտի հարավային կողմում՝ մի լեռան մոտ, սկզբում ապրել են քիչ թվով մարդիկ, որոնք կամովին հնազանդվել են դյուցազնին:

Տիտանյան Բելն իր թագավորությունն ամենքի վրա հաստատելուց հետո իր որդիներից մեկին հավատարիմ մարդկանց հետ ուղարկում է հյուսիսի կողմը՝ Հայկի մոտ, որ նա հնազանդվի իրեն ու խաղաղությամբ ապրի. «Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր,- ասում է,- սակայն տաքացրո՛ւ և մեղմացրո՛ւ քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդվելով՝ խաղա՛ղ ապրիր, որտեղ որ կհաճես իմ երկրում բնակության տեղ ընտրել»:

Հայկը Բելի պատգամաբերներին հետ է ուղարկում՝ խստությամբ պատասխանելով: Նրանք վերադառնում են Բաբելոն:

Բ

Այն ժամանակ Տիտանյան Բելը զորք է ժողովում նրա դեմ և հետևակ զորքի մեծ բազմությամբ գալիս հասնում է հյուսիս՝ Արարադ երկիրը՝ Կադմոսի տան մոտ: Կադմոսը փախչում է Հայկի մոտ՝ իրենից առաջ բանբերներ ուղարկելով՝ եղելությունը ժամ առաջ հաղորդելու: «Գիտցա՛ծ եղիր,- ասում է,- ով մեծդ դյուցազունների մեջ, որ Բելը գալիս է քեզ վրա հսկա քաջերով և երկնադեզ հասակով մրցող հսկաներով: Ուրեմն շտապի՛ր մտածել, թե ինչ ես անելու»:

Իսկ հանդուգն Բելը հսկա ամբոխի զորությամբ, ինչպես մի հեղեղ, որ զառիվայրից ներքև է վիժում, շտապում էր հասնել Հայկի բնակության սահմանները:

Այս ժամանակ ուշիմ և խոհեմ հսկա Հայկը՝ գեղագանգուր մազերով, վառվռուն աչքերով, շտապով հավաքում է իր որդիներին և թոռներին՝ թվով շատ նվազ, քաջ և աղեղնավոր մարդկանց և ուրիշների, գնում հասնում է մի ծովակի ափի, որի ջուրն աղի է և մանր ձկներ է պարունակում: Եվ դիմելով իր զորքին՝ ասում է. «Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, աշխատե՛ք այնտեղին հարվածել, որտեղ քաջերի խուռն բազմության մեջ կանգնած կլինի Բելը, որպեսզի կա՛մ մեռնենք, և մեր աղխը Բելի ծառայության տակ չընկնի, կա՛մ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի, և մենք հաղթություն տանենք»:

Առաջ անցնելով՝ նրանք հասնում են բարձրաբերձ լեռների միջև գտնվող մի դաշտաձև տեղ: Եվ գետի հոսանքի աջ կողմում՝ բարձրավանդակի վրա, ամուր դիրք գրավելով, տեսնում են Բելի ամբոխի բազմաթիվ անկարգ հրոսակը:

Հայկը ճանաչում է Բելին, որը սպառազինված ջոկատով ամբոխի առաջն էր անցել, և երկար տարաձություն կար նրա ու ամբոխի միջև: Նա կրում էր երկաթե գլխանոց, թիկունքի և լանջի վրա՝ պղնձե տախտակներ, մեջքին կապել էր գոտի, որի ձախ կողմից կախված էր երկսայրի սուրը, աջ ձեռքում բռնել էր հսկայական նիզակը, իսկ ձախում՝ վահանը: Նրա աջ և ձախ կողմում ընտիր զորականներ էին:

Հայկը, տեսնելով լավ սպառազինված Տիտանյանին և նրա աջ ու ձախ կողմի ընտիր մարդկանց, կանգնեցնում է Արամանյակին երկու եղբայրներով աջ կողմում, Կադմոսին իր ուրիշ երկու որդիներով՝ ձախ կողմում, քանի որ աղեղ և սուր գործածելու մեջ կորովի մար-դիկ էին: Ինքը կանգնում է առջևում, զինյալների մյուս բազմությունը կանգնեցնում է իր հետևում, դասավորում մոտավորապես եռանկյունի ձևով և հանդարտ առաջ շարժվում:

Երբ երկու կողմի հսկաներն իրար մոտ են հասնում, երկրի վրա ահագին դղրդյուն են բարձրացնում իրենց գրոհներով և իրար վրա ահ ու սարսափ են տարածում իրենց հարձակումներով: Այնտեղ երկու կողմից ոչ սակավ հաղթանդամ մարդիկ, սրի բերանի հանդիպելով, թավալվում-ընկնում էին գետին, և կռիվն անորոշ էր մնում, երկու կողմերը՝ անպարտելի: Այս անսպասելի դիպվածը տեսնելով՝ Տիտանյան արքան զարհուրեց և հետ քաշվելով՝ սկսեց բարձ-

ռանալ այն բլուրը, որտեղից իջել էր՝ մտածելով ամբոխի մեջ ամրանալ, մինչև ամբողջ զորքը հասնի:

Աղեղնավոր Հայկը, այս բանը հասկանալով, իրեն առաջ է նետում: Հասնելով Բելին՝ պինդ քաշում է լայնալիճ աղեղը. երեքթևյան նետը դիպչում է նրա կրծքի տախտակին և շեշտակի թափով անցնելով նրա թիկունքի միջով՝ գետին է խրվում: Այսպես գոռոզացած Տիտանյանն ընկնում է գետին ու շունչը փչում: Իսկ Բելի զորքը, այս քաջությունը տեսնելով, փախչում է:

Հայկը ճակատամարտի տեղը շինում է դաստակերտ և անունը դնում է Հայք: Հաղթական պատերազմի պատճառով գավառն էլ մինչև այժմ կոչվում է Հայոց ձոր, մեր երկիրը մեր նախնի Հայկի անունով՝ Հայք:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Արտահայտիչ ու վա՛րժ կարդա տեքստը՝ պահպանելով հայերենին հատուկ արտասանությունը և շեշտադրումը:
2. Ըստ նպատակադրման և նախօրոք կազմած պլանի՝ կարդացածդ հատվածը վերաշարադրի՛ր համապատասխան տրամաբանական հերթականությամբ:
3. Ինչպե՞ս կմեկնաբանես ճակատամարտից առաջ Հայկի՝ իր զորքին ուղղված խոսքը: Ի՞նչ խորհուրդ ունի այն:
4. Հայկի համոզմամբ ի՞նչն է մարդու և ժողովրդի համար բարձրագույն արժեքը, իսկ քեզ համա՞ր:
5. Նկարագրի՛ր հերոսներին քո բառերով:

Հերոս	Հերոսի արտաքին նկարագրություն	Հերոսի երկու վարքագիծ մատնանշի՛ր:	Տեքստից ելնելով՝ բացատրի՛ր, թե նա ինչու այդպես վարվեց:
Հայկ			
Բել			

6. Մեկնաբանի՛ր Մ. Խորենացու «Քաջերի սահմանը իրենց զենքն է, որքան կտրի, այնքան էլ կտիրի» թևավոր խոսքի իմաստը:
7. Հայ ժողովրդի ազգային բնավորության ի՞նչ կարևոր գծեր են խտացված Հայկի կերպարում:
8. Ներկայացրո՛ւ՝ առասպելում ինչպես են արտահայտվել պատմիչի համակրանքը Հայկի և հակակրանքը Բելի նկատմամբ: